Հավելված
ՀՀ կառավարության 2023 թվականի
հունիսի 16-ի N 957 - Ն որոշման

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԹՂԹԵ ԵՎ ՔԻՄԻԱԿԱՆ ԹԵԼՔԵՐԻՑ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգի (այսուհետ՝ տեխնիկական կանոնակարգ) գործողությունը տարածվում է թղթե զանգվածից, թղթից, թաղանթանյութի թելքերի պաստառից, ինչպես նաև քիմիական թելքերից և այլ մանածագործական նյութերից պատրաստված՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերին համապատասխան հետևյալ ապրանքների վրա՝

1) զուգարանի թուղթ	4818 10
2) թաշկինակներ և կոսմետիկ անձեռոցիկներ կամ դեմքի անձեռոցիկներ և սրբիչներ	4818 20
3) սփռոցներ և անձեռոցիկներ	4818 30 000 0
4) կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության այլ արտադրանք	4818 90-ից
5) կանացի հիգիենիկ միջադիրներ և վիրախծուծներ (տամպոններ) և համանման իրեր՝ ցանկացած նյութից	

9619 00 300 0,
9619 00 400 0,
9619 00 500 0,
9619 00 710,
9619 00 750,
9619 00 790,
9619 00 890:

2. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանվում են սույն որոշման 1-ին կետով սահմանված կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների (այսուհետ՝ կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ) անվտանգությունը բնութագրող ցուցանիշները, դրանց մակնշմանը, փաթեթավորմանը, պահմանը, փոխադրմանը, շուկայահանմանը ներկայացվող պահանջները և համապատասխանության գնահատման ընթացակարգերը:

3. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքները ենթակա են համապատասխանության պարտադիր հավաստման:

2. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4. Սույն տեխնիկական կանոնակարգում կիրառվում են հետևյալ հասկացությունները՝

1) **անհատական փաթեթվածք՝** մեկ առանձին միջադիրի, փաթեթավորված փաթեթ.

2) **թաղանթանյութ՝** թելքավոր կիսապատրաստվածք, որն ստացվում է քիմիկատների լուծույթների հետ բուսական հումքի եփման միջոցով, որի արդյունքում հեռացվում է ոչ թաղանթանյութային բաղադրիչների մեծ մասը՝ լիգնին, կիսաթաղանթանյութ, լուծամզուքային նյութեր.

3) **թուղթ՝** նյութ, որի 1 մ^2 մակերեսի զանգվածը չի գերազանցում 230 գ-ը, հիմնականում բաղկացած է մակերևութային շաղկապման ուժով իրար կապված

բուսական թելքերից և կարող է պարունակել սոսնձապատման նյութեր, հանքային լցանյութեր, քիմիական և բնական թելքեր, պիգմենտներ և ներկանյութեր.

4) **կանացի հիգիենիկ միջադիր՝** մեկանգամյա օգտագործման բազմաշերտ ներծծող ապրանք, որը նախատեսված է կանանց արտաքին արտազատումների ներծծման և պահման համար.

5) **հատուկ բաղադրիչ՝** նյութ, որը նախատեսված է կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներին հիմնական գործառական հատկություններից բացի լրացուցիչ հատկություններով (հակամանրէային, հոտը կլանող և այլն) օժտելու համար:

3. ՇՈՒԿԱՅԱՀԱՆՄԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

5. Հայաստանի Հանրապետության տարածքում կենցաղային և սանիտարա-հիգիենիկ նշանակության ապրանքների իրացման ժամանակ պետք է պահպանվեն համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա արտադրանքի նկատմամբ սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջները:

6. Հայաստանի Հանրապետության տարածքում համապատասխանության պարտադիր հավաստման ենթակա և շրջանառության մեջ գտնվող կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքները պետք է ուղեկցվեն համապա-տասխանության նշանի մակնշմամբ, համապատասխանության սերտիֆիկատով կամ գրանցված համապատասխանության հայտարարագրով:

4. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների պատ-րաստման համար օգտագործվող թուղթը, թաղանթանյութը, թղթի զանգվածը, թաղանթանյութի բամբակը, մանածագործական նյութերը, պոլիմերային թաղանթ-ները, քիմիական թելքերը, մանածագործական և դրանց հետ խառնվող թղթի և ստվարաթղթի թափոնը, ինչպես նաև ներկանյութերը, բուրավետիչ և (կամ) տարբեր բաղադրիչներով (հականեխիչ, ախտահանիչ, լվացող և այլն) տոգորման

նյութերը, տպագրական ներկերը, սոսինձները և կլանող (աբսորբող) նյութերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի N 1009-Ն որոշման N 10 հավելվածով սահմանված պահանջներին:

8. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների անվտանգության հիգիենիկ ցուցանիշները, այդ թվում՝ ջրային միջավայր արտազատվող վնասակար նյութերի թույլատրելի քանակությունները պետք է համապատասխանեն N 1 աղյուսակով սահմանված պահանջներին, իսկ կանացի հիգիենիկ միջադիրների, վիրախծուծների (տամպոններ) գործառական ցուցանիշները պետք է համապատասխանեն N 2 աղյուսակով սահմանված պահանջներին:

Աղյուսակ N 1

Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների անվտանգության հիգիենիկ ցուցանիշները, այդ թվում՝ ջրային միջավայր արտազատվող վնասակար նյութերի թույլատրելի քանակությունները

Ցուցանիշի անվանումը	Ցուցանիշի արժեքն ըստ արտադրանքի տեսակի				
	թղթե անձեռոցիկներ, թաշկինակներ, զուգարանի թուղթ (միաշերտ կամ բազմաշերտ) և այլ թղթե արտադրատեսակներ	խոհանոցային թղթե սրբիչներ և սպասքավորման անձեռոցիկներ, սփոցներ	կանացի հիգիենիկ միջադիրներ, վիրախծուծներ (տամպոններ)		
			ամենօրյա	կրիտիկական օրերի համար	գիշերային և առատ արտազատման դեպքում
1	2	3	4	5	6
1. Ջրային լուծամզուքի pH	4,5-8,5		ջրային լուծույթի pH-ի փոփոխությունը ±1-ից ոչ ավելի		
2. Հիգիենիկ ցուցանիշները՝ 2.1. Ջրային լուծամզուքի՝					

արտաքին տեսքը	թափանցիկ հեղուկ՝ առանց պղտորության, նստվածքի և գունավորման		թափանցիկ հեղուկ՝ առանց պղտորության և նստվածքի
հոտը, բալլ, ոչ ավելի	- 1		1
թթվայնացումը (օրգանական նյութերի ընդհանուր քանակը), մգ O_2/դմ^3, ոչ ավելի	-		10,0
2.2. Ջրային միջավայր արտազատվող վնասակար նյութերի քանակությունը, մգ/դմ^3, ոչ ավելի՝			
ֆորմալդեհիդ	0,100		0,100
կապար (Pb)	-	0,030	-
ցինկ (Zn)	-	0,100	-
քրոմ (Cr^6), քրոմ (Cr^3)	-	0,100 (գումարային)	-
Գունավորման համար ներկեր օգտագործելու դեպքում			
կապույտ կոբալտ (Co)	0,100		-
դեղին քրոմ (Cr^6), քրոմ (Cr^3)	0,100 (գումարային)		-
կադմիում (Cd)	0,001		-
պղինձ (Cu)	1,000		-

կարմիր		
մանգան (Mn)	0,100	-
կանաչ		
պղինձ (Cu)	1,000	-
քրոմ (Cr^6), քրոմ (Cr^3)	0,100 (գումարային)	-
մանգան (Mn)	0,100	-
սև, վարդագորշա-գույն, վարդագույն		
կոբալտ (Co)	0,100	-
պղինձ (Cu)	1,000	-
երկնագույն		
պղինձ (Cu)	1,000	-
գորշագույն		
երկաթ (Fe)	0,300	-
2.3. Ձրային լուծամզուքի թունավորության ցուցիչը, %	70-ից մինչև 120	70-ից մինչև 120
3. Մաշկագրգռիչ ազդեցությունները, բալլ, ոչ ավելի	-	0
4. Ձգայունացնող ազդեցությունները	-	Բացակայում են:
5. Մանրէաբանական ցուցանիշները՝ մանրէազերծված կենցաղային և սանիտարահիգիենիկ	1×10^3	1×10^2

նշանակության ապրանքների՝ 5.1. Մեզոֆիլ աերոբ և ֆակուլտատիվ անաերոբ մանրէների ընդհանուր քանակությունը (ՄԱՖԱՄ), ԳԱՄ/գ, ոչ ավելի		
5.2. Էնտերոբակտեր (Enterobacteriaceae) ցեղի մանրէներ	Բացակայում է:	Բացակայում է:
5.3. Ախտածին ստաֆիլակոկեր (Staphylococcus aureus)	Բացակայում է:	Բացակայում է:
5.4. Պսևդոմոնա աերոգինոզա (Pseudomonas aeruginose)	Բացակայում է:	Բացակայում է:
5.5. Խմորասնկեր և բորբոսասնկեր	1×10^2	Բացակայում է:

Աղյուսակ N 2

Արտադրանքի տեսակը	**Ցուցանիշի անվանումը և նորմը**		
	լրիվ խոնավա-կլանումը, գ, ոչ պակաս	**ներծծման ժամանակը, վ, ոչ ավելի**	**հակադարձ մակակլանումը, գ**

1	2	3	4
Կանացի հիգիենիկ միջադիրներ, վիրախծուծներ (տամպոններ)			
Ամենօրյա՝			
1-ին դասի	8,5	-	-
2-րդ դասի	4,0	-	-
Կրիտիկական օրերի համար՝			
1-ին դասի՝			
միջին խոնավակլանմամբ	50,0	7,0	-
բարձր խոնավակլանմամբ	55,0	6,0	-
2-րդ դասի՝			
միջին խոնավակլանմամբ	44,0	7,0	-
բարձր խոնավակլանմամբ	47,0	7,0	-
Գիշերային և առավտ արտազատման դեպքում՝			
1-ին դասի՝			
միջին խոնավակլանմամբ	65,0	7,0	-
բարձր խոնավակլանմամբ	70,0	6,0	-
2-րդ դասի՝			-
միջին խոնավակլանմամբ	60,0	7,0	

5. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱԿՆՇՈՒՄԸ

9. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների յուրաքանչյուր միավորի փաթեթվածքի կամ փաթեթվածքի և (կամ) դրան ամրացված պիտակի վրա պետք է լինի հետևյալ մակնշվածքը՝

1) արտադրանքի անվանումը, մակնիշը (առկայության դեպքում).

2) արտադրող երկրի անվանումը.

3) արտադրող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը.

4) կանացի հիգիենիկ միջադիրների և վիրախծուծների համար՝ տեխնիկական կառուցվածքի տարբերակիչ բնութագրերը.

5) արտադրանքի անվանական չափերը (գլանափաթեթի երկարությունը և լայնությունը, թերթի չափերը կամ մակերեսը).

6) տեղեկատվություն հատուկ բաղադրիչների առկայության մասին.

7) փաթեթվածքում ապրանքների քանակը.

8) պատրաստման ամիսը, տարեթիվը, իսկ մանրէազերծված կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների համար՝ մանրէազերծման օրը, ամիսը, տարեթիվը.

9) «Կոյուղի չնետել» բառերը.

10) տոգորող լուծույթի կամ պատվածքի (առկայության դեպքում) բաղադրությունը.

11) օգտագործման ցուցումները.

12) մանրէազերծված կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների համար լրացուցիչ պետք է նշել «Չօգտագործել անհատական փաթեթվածքի խախտման դեպքում» բառերը, իսկ ճառագայթումային մեթոդով մանրէազերծման դեպքում՝ «Մանրէազերծված է ճառագայթումային մեթոդով» բառերը.

13) կանացի հիգիենիկ միջադիրների համար լրացուցիչ կարող են նշված լինել N 3 աղյուսակով սահմանված խոնավակլանման գրաֆիկական պայմանական նշանները:

Աղյուսակ N 3

Կանացի հիգիենիկ միջադիրների խոնավակլանման գրաֆիկական պայմանական նշանները

Միջադիրի տեսակը	**Խոնավակլանման գրաֆիկական պայմանական նշանը**

Ամենօրյա՝ 1-ին դասի 2-րդ դասի	
Կրիտիկական օրերի՝ 1-ին դասի՝ բարձր խոնավակլանմամբ 2-րդ դասի՝ բարձր խոնավակլանմամբ 1-ին դասի՝ միջին խոնավակլանմամբ 2-րդ դասի՝ միջին խոնավակլանմամբ	
Գիշերային՝ 1-ին դասի՝ բարձր խոնավակլանմամբ 1-ին դասի՝ միջին խոնավակլանմամբ 2-րդ դասի՝ միջին խոնավակլանմամբ	

10. Մակնշվածքը պետք է լինի հստակ, պարզ և ընթեռնելի:

11. Արտադրողը, մատակարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը պետք է ապահովի Հայաստանի Հանրապետությունում իրացվող՝ Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և ներմուծվող կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների մասին սույն տեխնիկական կանոնակարգի 9-րդ կետով սահմանված տեղեկատվության տրամադրումն սպառողին՝ հայերենով:

12. Փոխադրական տարայի մակնշվածքը պետք է պարունակի «Կեռերով չվերցնել», «Պահպանել խոնավությունից» վարվելակարգային նշանները:

6. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ԵՎ ՍԱՆԻՏԱՐԱՀԻԳԻԵՆԻԿ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓԱԹԵԹԱՎՈՐՈՒՄԸ, ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԵՎ ՊԱՀՈՒՄԸ

13. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքները պետք է փաթեթավորել թղթով, պոլիմերային թաղանթով կամ փաթեթավորման այլ նյութերով, որոնք կապահովեն դրանց պահպանվածությունը և սույն տեխնիկական

կանոնակարգով սահմանված պահանջների պահպանումը՝ փոխադրման և պահման ընթացքում:

14. Տոգորման նյութերով մշակված կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքները պետք է փաթեթավորել փոխադրման, իրացման և պահման ժամանակ գործառական հատկությունների պահպանվածությունն ապահովող հերմետիկ փաթեթվածքով:

15. Մանրէազերծված յուրաքանչյուր կանացի հիգիենիկ միջադիրի և վիրախծուծի հերմետիկ փաթեթավորման նյութերը պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի N 1009-Ն որոշման N 10 հավելվածով սահմանված պահանջներին:

16. Նույն խմբային փաթեթվածքում պետք է փաթեթավորել նույն անվանմամբ, չափերով, տեխնիկական և գեղազարդային նույն կառուցվածքով կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներ:

17. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքներով փաթեթվածքների փոխադրումը պետք է իրականացնել փոխադրական տարաներում փաթեթավորված՝ փակ տեսակի տրանսպորտային միջոցներով:

18. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքները պետք է պահել փակ, մթնոլորտային տեղումներից, խոնավությունից պաշտպանված տարածքներում և փոխադրման, իրացման ժամանակ ապահովել պաշտպանվածությունը մթնոլորտային տեղումներից և խոնավությունից:

7. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

19. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների խմբաքանակի կամ սերիական արտադրության համար համապատասխանությունը գնահատելու համար հայտատուն՝

1) խմբաքանակի կամ սերիական արտադրության համար կիրառում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման կամ հայտարարագրման ընթացակարգերը.

2) արտադրանքը մակնշում է համապատասխանության ազգային նշանով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի մարտի 14-ի N 337-Ն որոշմամբ սահմանված կարգով:

20. Սերտիֆիկացում իրականացրած համապատասխանության գնահատման նշանակված մարմինը փորձարկումներ կատարելու նպատակով արտադրանքի նմուշառումը պետք է կատարի սույն տեխնիկական կանոնակարգի 10-րդ բաժնում ներառված ստանդարտներին համապատասխան:

21. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների նույնականացման գործընթացում ստուգվում են դրանց փաթեթվածքի կամ դրանց փակցված պիտակների վրա կատարված մակնշվածքի համապատասխանությունն ապրանքաուղեկից փաստաթղթում նշված տեղեկատվությանը:

22. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջների համապատասխանությունը կատարվում է 10-րդ բաժնով նախատեսված ստանդարտներով սահմանված փորձարկման մեթոդներով:

23. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների անվտանգության հիգիենիկ ցուցանիշների որոշման ժամանակ ջրային լուծամզուքը պետք է պատրաստել սանիտարական կանոններին և նորմերին համապատասխան:

24. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների անվտանգության հիգիենիկ ցուցանիշները պետք է համապատասխանեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի օգոստոսի 1-ի N 1009-Ն որոշման N 10 հավելվածով սահմանված պահանջներին:

25. Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ սահմանված սերտիֆիկացման համար նախա-

տեսված ընթացակարգերով սերիական արտադրանքի համար համապատասխանության գնահատման նշանակված մարմինը հայտատուին համապատասխանության սերտիֆիկատը հանձնելու ժամանակ վերջինիս հետ կնքում է համապատասխանության սերտիֆիկատ տալու պայմանների պահպանման նկատմամբ իրականացվող հսկողության պայմանագիր:

26. Համապատասխանության հայտարարագրի կամ համապատասխանության սերտիֆիկատի գործողության ժամկետը սահմանվում է 3 տարուց ոչ ավելի:

27. Սույն տեխնիկական կանոնակարգով սահմանված պահանջներին համապատասխանության սերտիֆիկատի կամ համապատասխանության հայտարարագրի կասեցման կամ դադարեցման պայմանները և գործընթացները սահմանված են Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի հունվարի 16-ի N 56-Ն որոշմամբ:

8. ՉԱՓՈՒՄՆԵՐԻ ՄԻԱՍՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

28. Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների ցուցանիշների չափումների միասնականության ապահովումը պետք է իրականացվի «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով:

9. ՊԵՏԱԿԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

29. Սույն տեխնիկական կանոնակարգի պահանջներին կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության ապրանքների համապատասխանության պետական վերահսկողությունն իրականացվում է «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքներով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով:

10. ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ՊԱՀԱՆՋՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՍՏԱՆԴԱՐՏՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Ստանդարտների նշագիրը	**Պահանջներ և փորձարկման մեթոդներ սահմանող ստանդարտի անվանումը**
ԳՕՍՏ Ռ 52354	Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե արտադրատեսակները. Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ԳՕՍՏ Ռ 52483	Կանացի հիգիենիկ միջադիրներ (փաթեթներ). Ընդհանուր տեխնիկական պայմաններ
ՀՍՏ 219	Արտադրատեսակներ սանիտարահիգիենիկ նշանակման. Անձնական հիգիենայի արտադրատեսակներ. Ընդհանուր տեխնիկական պայմաններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

16.06.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ